ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6

ք. Երևան «____» դեկտեմբերի 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, **«Իրտիգ» ՍՊԸ** -ն, ի դեմս տնօրեն՝ **Տ. Պողոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Տեխնիկական հսկողության» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 86,000 (ութսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված 15 է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1⍰1, N 1⍰2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Իրտիգ» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝00846441 Հ/Հ՝ 900018001231 Կենտրոնական գանձապետարան	Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թումանյան 11/26 ՀՎՀՀ՝ 06954405 Հ/հ՝ 205142207229-1001 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Գործադիր տնօրեն՝ **Արթուր Սողոմոնյան**	Տնօրեն՝ **Տիգրան Պողոսյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » դեկտեմբերի 2020թ. կնքված
ՀՇ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավեր ով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
1	71351540	Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Լմբաղ 2 N 40 բազմաբնակարան շենքերի տանիքի վերանորոգում>> Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	73,000	1	Շիրակի մարզի Արթիկ համայնք	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 84 օր)
2	71351540	Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի <<Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգում>> Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	13,000	1	Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնք	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 84 օր)

Ֆինանսավորման աղբյուր	2020թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Աշխատանքի տեսակը	Ըստ ծավալաթերթ-նախահաշվի , որը կցվում է
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը) • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:

Հաշվետվության ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): ***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: • ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանի • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման

*Ծրագրի մեկնարկի մասին կտեղեկացվի գրավոր

1. Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

<< Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացում >> լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները		Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1		2
1	Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Լմբադ 2 N 40 բազմաբնակարան շենքերի տանիքի վերանորոգում>> Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	**Բնակելի, հասարակական և արտադրական**
2	Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի <<«Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգում>> Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	**Բնակելի, հասարակական և արտադրական**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ. Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝ **Արթուր Սողոմոնյան**

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իրտիգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Թումանյան 11/26
ՀՎՀՀ՝ 06954405
Հ/հ՝ 205142207229-1001
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Տնօրեն՝ **Տիգրան Պողոսյան**

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
« » դեկտեմբերի 2020թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Անի համայնքի Գուսանագյուղի միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չ/միավոր	Քանակ	Միավորի ընդհանուր արժեքը /հզ. դրամ/	Ընդհանուր արժեքը /հզ. դրամ/
1	2	3	4	5	6
	1.Քանդման աշխատանքներ				
1	Տանիքի ծածկի պահպանված հատվածի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթի ապամոնտաժում	մ²	8.40		
2	Տանիքի ծածկի պահպանված հատվածի փայտե կառուցատարրերի ապամոնտաժում	մ²	8.0		
3	Տանիքի ծածկի ռուբերոիդի և բիտումի գոյություն ունեցող շերտի քանդում	մ3	54.0		
4	Պատերից և առաստաղից գաջի սվաղի քայքայված հատվածի հեռացում	մ²	38.0		
5	Պատերից և առաստաղից հին ներկի շերտի մաքրում	մ²	128.0		
6	Բնահողի քանդում ձեռքով /եզրաքարերի հիմքերի համար/	մ³	1.6		
7	Քայքայված բետոնե սալվածքի քանդում	մ³	1.0		
8	Թուջե ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում /1հատ-12 մարտկոց/	լր	4.0		
9	Էլ. լուսավորության լուսատուների ապամոնտաժում	հատ	2.0		
10	Շին աղբի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 3կմ	տ	21.6		
	Ընդամենը՝ 1.				
	2.Վերանորոգման աշխատանքներ				
	2.1 Տանիքի վերանորոգման աշխատանքներ				
1	Տանիքի փայտե կառուցատարրերի և կավարամածի կառուցում , մշակված հականեխիչ նյութերով	մ³	2.89		
2	Ամրանալար AI Φ10	մ	11.00		
3	Պողպատե անկյունակ 40x40x4մմ չափի /արժեքը/ (0,06*64=3,85մ) L=0,06մ	մ	3.850		
4	Պողպատե թիթեղի տեղադրում 4մմ հաստ. S=0,016մ2 34 հատ /արժեքը/	մ2	0.540		
5	Տոլ 0,55մ լայնությամբ L=32,2մ	մ2	17.70		
6	Տանիքի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթի մոնտաժում,	100մ²	0.60		

	КП-21-0,55մմ				
7	Տանիքի հորիզոնական ջրհորդանների կառուցում 0,55մմ հաստ. ցինկապատ թիթեղով լայն. 800մմ	մ	27.00		
8	Տանիքի հարթ ցինկապատ թիթեղով ծածկույթի մոնտաժում, 0,55մմ հաստ. (գագաթնածածկի և պատի վրա /6,4+0,6=7,0քմ/)	100մ²	0.07		
9	Տանիքի հարթ ցինկապատ թիթեղով արցունքաթափի իրականացում, 0,55մմ հաստ	100մ²	0.23		
10	Ջրահեռացման ուղղահայաց խողովակաշարերի մոնտաժում, ցինկ. պող. Φ150մմ խողովակ, 0,55մմ հաստ.	մ	6.80		
11	Ջրահեռացման ձագարների տեղադրում, ցինկապատ թիթեղից Φ150մմ, 0,55մմ հաստ	հատ	2.0		
12	Խարամի շերտի մեջ փոսերի փորում փայտե հեծանների տեղադրման համար/0,2x0,25x0,45/ 9հատ	մ3	1.6		
13	Ջրահեռացման արմունկներ /արժեքը/, ցինկապատ թիթեղից Φ150մմ, 0,55մմ հաստ.	հատ	2.0		
14	Տանիքի փայտե կառուցատարրերի հրապաշտպանում	մ2	60.0		
15	Դյուբելներ, ինքնապտուտակներ M16x300, M16x150	հատ	22.0		
	Ընդամենը՝ 2.1				
	2.2 Ներքին վերանորոգման աշխատանքներ				
1	Պատերի գաջե սվաղի վերականգնում	մ²	24.0		
2	Արասաղի գաջե սվաղի վերականգնում	մ²	13.8		
3	Պատերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկումով	մ²	82.0		
4	Առաստաղի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկումով	մ²	46.0		
5	Նախկինում ապամոնտաժված թուջե ջեռուցիչ սարքերի մոնտաժում /1հատ-12 մարտկոց/	լր	4		
6	Էլ. լուսավորության նախկինում ապամոնտաժված լուսատուների մոնտաժում	հատ	2		
	Ընդամենը՝ 2.2				
	Ընդամենը՝ 2.				
	3. Բարեկարգման աշխատանքներ				
1	Բնահողի խտացում խճով	100մ²	0.27		
2	Խճե խառնուրդի տոփանում ասֆալտի ծածկույթի տակ, 10սմ հաստ. /23քմ*0,1=2,3խմ/	մ³	2.30		
3	Բազալտե 150*300մմ չափի եզրաքարերի տեղադրում Վ15 դասի բետոնե հիմքով	մ	27.0		
4	Բազալտե սալերի/բրեկչա/ շերտ h=4սմ հաստությամբ,ամրացված ց/ա շաղախով	մ²	23.0		
	Ընդամենը՝ 3.				
	Ընդամենը՝ 1;2;3				
	Ընդամենը				
	ԱԱՀ - 20 %				
	Ընդամենը				

ԾԱՎԱԼ ԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չ/միավոր	Քանակ	Միավորի ընդհանուր արժեքը /հզ. դրամ/	Ընդհանուր արժեքը /հզ. դրամ/
1	2	3	4	5	6
	1.Քանդման աշխատանքներ				
1	Ասբոշիֆերե տանիքի ծածկույթի ապամոնտաժում	100մ^2	2.20		
2	Տանիքի մետաղական հարթ թիթեղե ծածկույթի ապամոնտաժում	100մ^2	0.55		
3	Ջրահեռացման թիթեղե խողովակների ապամոնտաժում	100մ	0.28		
4	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարերի ապամոնտաժում	100մ	0.254		
5	Տանիքի փայտե կավարամածի և տախտակամածի կառուցատարրերի ապամոնտաժում	մ^3	1.50		
6	Ձեղնահարկի պատուհանի ապամոնտաժում	հատ	1.0		
7	Տանիքի ծպեղնահարկի փայտե դռների ապամոնտաժում	մ^2	3.8		
8	Ապամոնտաժված շին աղբի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 3կմ	տ	6.2		
	Ընդամենը՝ 1.				
	2.Վերանորոգման աշխատանքներ				
1	Տանիքի փայտե կավարամածի և տախտակամածի կառուցում, մշակված հականեխիչ մածիկով /1,3+1,67=2,97խմ/	մ^3	2.97		
2	Կավարամածի ամրացման համար մետաղե անկյունակների տեղադրում 50x50x3մմ	տ	0.03		
3	Տանիքի ձեղնալուսամուտի կառուցում ժայռուզային փեղկով	հատ	1.0		
4	Տանիքի անկյունաձև գագաթնագծի /պիպ/ կառուցում 0,55մմ հաստ. հարթ ցինկապատ թիթեղով	մ^2	7.150		
5	Տանիքի պրոֆիլավոր ցինկապատ թիթեղե ծածկույթի մոնտաժում, ԿՊ-21-0,55մմ	100մ^2	2.40		
6	Տանիքի հարթ ցինկապատ թիթեղով ծակույթների մոնտաժում, 0,55մմ հաստության /ջրհորդան և արցունքաթափ; /19,2+19,2=38,4քմ/	մ^2	38.40		
7	Տանիքի պարապետի ծածկ ցինկ. հարթ թիթեղով 0,55մմ հաստ.	մ2	33.60		
8	Տանիքի ճակատային մասի երեսապապում ցինկ. հարթ թիթեղով 0,55մմ հաստ., մետ. հիմնակմախքի կառուցումով /40*30*3մմ չափի ուղանկուն խողովակ/	մ2	14.30		
9	Ձնապաշտպան արգելքների մոնտաժում ցինկապատ թիթեղով, լայն. 550մմ	100մ	0.26		
10	Ջրահեռացման ուղղահայաց խողովակաշարերի մոնտաժում, ցինկ. պող. Φ150մմ խողովակ, 0,55մմ հաստ. ամրացման էլեմենտներով	մ	39.00		
11	Ջրահեռացման ձագարների տեղադրում,ցինկապատ թիթեղից Φ150մմ, 0,55մմ հաստությամբ թիթեղից	հատ	3		
12	Ջրահեռացման արմունկներ /արժեքը/, ցինկապատ Φ150մմ, 0,55մմ հաստությամբ թիթեղից	հատ	9		
13	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարերի պատրաստում և մոնտաժում	100մ	0.26		
14	Տանիքի պողպատե ճաղաշարերի, օդափոխության բլոկի մետաղե դետալների ներկում /26մ*0,6մ*0,3=4,7քմ+0,8քմ/	մ^2	5.5		
15	Փայտե կավարամածի և տախտակամածի հրապաշտպանություն՝ մշակում հակահրդեհային լուծույթով	100մ^2	2.20		

16	Մետաղապլաստե դռների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ. խուլ դռան փեղկով	մ²	3.80		
17	Տանիքի փայտե աստիճանի պատրաստում և տեղադրում	մ³	0.07		
18	Օդափոխության հորանի տանիքի ծածկույթի, օդափոխության բլոկի և տանիքի ծածկի հատման մասում ցինկապատ 0,55մմ հարթ թիթեղի իրականացում	մ²	7.30		
19	Տանիքի գոյություն ունեցող մետաղական կմախքի ներկում	մ²	123.0		
20	Քառակուսի խողովակ 20x20	գմ	2.2		
21	Շերտապողպատ 40x5մմ	գմ	13.0		
22	Ավտոկռունկի ծառայություն	ժ	10.0		
	Ընդամենը՝ 2.				
	Ընդամենը՝ 1;2				
	Ամբողջը				
	Շահույթ 11%				
	Ամբողջը				
	ԱԱՀ 20%				
	Ամբողջը				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ. Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն՝ **Արթուր Սողոմոնյան**

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իրտիգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Թումանյան 11/26
ՀՎՀՀ՝ 06954405
Հ/հ՝ 205142207229-1001
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Տնօրեն՝ **Տիգրան Պողոսյան**

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.2
« » դեկտեմբերի 2020թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6 ծածկագրով պայմանագրի

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Անի համայնքի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր, երաշխիքային ժամկետներ, աշխատանքների կատարման լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երկու տարի			
հ/հ	Անվանումը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	Երկաթբետոնե տարրեր	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	15 տարի
2.	Տանիքի փայտե կոնստրուկցիաներ և կավարամած	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	15 տարի
3.	Ցինկապատ թիթեղ	0,55մմ հաստ.	15 տարի
4.	Տանիքի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթ	ԿՊ-18-0,55մմ	15 տարի
5.	Ջրահեռացման խողովակներ	ըստ նախագծի	10 տարի
6.	Ջրահեռացման ծագարներ	ըստ նախագծի	10 տարի
7.	Հարդարման աշխատանքներ	Պատերի և առաստաղի գաջե սվաղ, լատեքսային ներկում	5 տարի
8.	Բարեկարգման աշխատանքներ	Ասֆալտբետոնե ծածկույթ	5 տարի
		Բազալտե եզրաքարեր	10 տարի

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաները՝

• բնակելի, հասարակական և արտադրական:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝

• բեռնատար ավտոմեքենա - 1 հատ,

• բեռնատար ինքնաթափ - 1 հատ,

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

• ճարտարագետ-շինարար - 1 մարդ:

Արթիկ համայնքի Լմբատ 2 հ. 40 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր, երաշխիքային ժամկետներ, աշխատանքների կատարման լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երկու տարի			
հ/հ	Անվանումը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	Տանիքի փայտե կավարամած և տախտակամած	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	15 տարի
2.	Ցինկապատ թիթեղ	0,55մմ հաստ.	15 տարի
3.	Տանիքի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթ	ԿՊ-18-0,55մմ	15 տարի
4.	Ձնապաշտպան արգելքներ	ըստ նախագծի	15 տարի
5.	Ջրահեռացման խողովակներ	ըստ նախագծի	10 տարի
6.	Ջրահեռացման ձագարներ	ըստ նախագծի	10 տարի

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաները՝

• բնակելի, հասարակական և արտադրական:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝

• բեռնատար ավտոմեքենա - 1 հատ,

• Ավտոկռունկ - 1 հատ,

• բեռնատար ինքնաթափ - 1 հատ,

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

• ճարտարապետ-շինարար - 1 մարդ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,

Կ. Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441

Հ/Հ՝ 900018001231

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն՝ Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Իրտիգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,

Թումանյան 11/26

ՀՎՀՀ՝ 06954405

Հ/հ՝ 205142207229-1001

Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Տնօրեն՝ Տիգրան Պողոսյան

/ստորագրություն/

Հավելված N 2
« » դեկտեմբերի 2020թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020-21թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում													
		դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Տեխնիկական հսկողության ծառայություններ	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000	73,000
2	Տեխնիկական հսկողության ծառայություններ	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն՝ **Արթուր Սողոմոնյան**

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իրտիգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Թումանյան 11/26
ՀՎՀՀ՝ 06954405
Հ/հ՝ 205142207229-1001
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Տնօրեն՝ **Տիգրան Պողոսյան**

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Ն	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն